տեսնելով, որ թէ խանութպան հարուստ հայը և թէ նրա գործակատարները վախից սարսափած՝ դէս ու դէն փախչելով ծակուծուկ մտան, սաստիկ զայրացած՝ գոռաց նրանց վրայ.—«Դուք, վախկոտ և հաստատուտ ու հաստագլուխ Հայեր, միթէ չգիտէք, որ անօրէն Թուրքը խաչվառ չի գնի, այլ խաչն ու խաչվառը չարդ ու փշուր կանի, իսկ նրա ջերմ երկրպագու քրիստոնեային բնաջինջ կանէ այս աշխարհիս երեսից։ Ափսո՜ն և հազար ափսո՜ս, որ այսպիսի լուսաւոր և գեղեցիկ քաղաքացի՜ք եք ապրում, բայց աշխարհիս խո՛րն ու չարից, սև ու սպիտակից ո՛չ մի տեղեկութիւն չունիք։ Մենք, մի բուռն թրքախօս Հայերս, թէև անօրէն լեռնականներին և արիւնարբու մահմետականներին զոհ տուինք մեր թանկագին մայրենի լեզուն, մեր կեանքն ու հարստութիւնը, բայց մեր կրօնքն ու հաւատը, մեր ազգութիւնն ու մեր ս. եկեղեցին արեան գնով անխախտ ու հաստատ պահեցինք։ Իսկ դուք, վախկոտ և միամիտ թիֆլիզցիներդ՝ մեզ արհամարհելով ու ծաղրելով, մեզ Թուրք եք անուանում հա՜...»։ Հազիւ կարողացայ հանդարտեցնել զայրացած քեռուս արդարացի բարկութիւնը։ Մի ուրիշ խանութից խաչվառ գնելով, մի քանի օրից յետոյ քեռուս իւր ընկերների հետ ճանապարհ ձգեցի դէպի իրենց սիրելի հայրենի աշխարհը։ Ուստիացի Հայը այսպէս չափազանց նախանձախնդիր է իւր ազգային ս. եկեղեցուն, իւր ս. կրօնին և այն ամենին, որ իւր սրտին շատ մօտ են։ Նամանաւանդ Նիժեցիք, որոնք շատ քաջ, անվախ և վարժ հրացանաձիգ են